ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

24 նոյեմբերի 2021 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով թիվ ԵԿԴ/0280/01/15 քրեական գործով ընդդատության վեճը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին դիմելու մասին Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2021 թվականի նոյեմբերի 8-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2015 թվականի նոյեմբերի 23-ին, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ծառայության քննչական վարչությունում (այսուհետ՝ նաև Նախաքննության մարմին) քննված թիվ 48114314 քրեական գործն ըստ մեղադրանքի Տիգրան Դավիթի Հարությունյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (3 դրվագ) և 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով (3 դրվագ), Ռուստամ Մարտիկի Համբարձումյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 38-34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով (2 դրվագ), Էդվարդ Գևորգի Պողոսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով, Անդրանիկ Գևորգի Գրիգորյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-266-րդ

հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով, Գագիկ Ջավենի Մխիթարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով, Արմեն Նորիկի Սաֆարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով, մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, որին շնորհվել է ԵԿԴ/0280/01/15 համարը:

2. Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ 2016 թվականի հունվարի 22-ի որոշմամբ թիվ ԵԿԴ/0280/01/15 քրեական գործն ըստ ընդդատության ուղարկվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան, և 2016 թվականի փետրվարի 9-ին ընդունվել դատավոր Վ.Խալաթյանի վարույթ:

3. 2020 թվականի նոյեմբերի 2-ին թիվ ԵԿԴ/0280/01/15 քրեական գործը վերամակագրվել է Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Վ.Ջիվանյանին:

4. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը (դատավոր Վ.Ջիվանյան), 2021 թվականի նոյեմբերի 8-ի որոշմամբ գործի ընդդատության մասին վեճը լուծելու համար դիմել է Վճռաբեկ դատարանի նախագահին:

5. Գործը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2021 թվականի նոյեմբերի 17-ին:

<u>Ընդդատության մասին վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2016 թվականի հունվարի 22-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) Այսպիսով, դատարանը հաշվի առնելով կողմերի կարծիքները, (…) ու պարզելով որ ստացված գործն ընդդատյա չէ Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանին, գտնում է, որ (…) ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն այն*

պետք է ըստ ընդդատության ուղարկվի Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան, նկատի ունենալով, որ մեղադրական եզրակացության և գործի նյութերի համաձայն՝ ամբաստանյալներին վերագրվող արարքներից որևէ մեկը չի կատարվել Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատական տարածքում, վերջին արարքը կատարվել է Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի դատական տարածքում և ընդդատության խախտումն ակնհայտ է եղել ի սկզբանե (…)»:

7. Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը 2021 թվականի նոյեմբերի 8-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «*Քրեական գործի ուսումնասիրությունից պարզ է դառնում, որ (…) ամբաստանյալներին վերագրվող արարքները՝ ըստ դրվագների կատարվել են ՀՀ Արմավիրի, Գեղարքունիքի, Արարատի և Կոտայքի մարզերում: Նախաքննական մարմնի կողմից առաջադրված մեղադրանքների համաձայն՝ 2014 թվականի մարտի 7-ից մինչև հուլիսի 4-ը ենթադրյալ հանցագործությունները որակվել են որպես յուրաքանչյուրը առանձին հանցագործություններ՝ ըստ դրվագների: Ընդ որում, հարուցված քրեական գործերը միացվել, քննվել են մեկ վարույթում՝ ՀՀ ԱԱԾ քննչական վարչությունում, և նախաքննությունը ավարտվել է Երևան քաղաքում:*

Ելնելով վերոգրյալից Դատարանն արձանագրում է, որ մեղադրյալներին մեղսագրված ենթադրյալ արարքները կատարվել են ՀՀ Արմավիրի, Գեղարքունիքի, Արարատի և Կոտայքի մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանների դատական տարածքում և մեղադրական եզրակացության բովանդակությունից բխում է, որ ամբաստանյալների կողմից կատարված ենթադրյալ արարքներից յուրաքանչյուրը որակված է որպես մեկ հանցագործություն՝ ըստ դրվագների, այլ ոչ թե որպես մեկ միասնական դիտավորությամբ կատարված շարունակվող հանցագործություն: ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ երկու կամ ավելի հանցագործությունների վերաբերյալ գործերն առաջին ատյանի տարբեր դատարաններին ընդդատյա լինելու դեպքում դրանք միացնելիս գործը քննում է այն

դատարանը, որի դատական տարածքում ավարտվել է տվյալ գործով մինչդատական վարույթը: Մինչդեռ՝ 2016 թվականի հունվարի 22-ի Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարանի գործն ըստ ընդդատության ուղարկելու որոշմամբ հիմք է ընդունվել շարունակվող կամ տևող հանցագործությունների դեպքում կիրառման ենթակա ընդդատության կանոնը»:

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի պատճառաբանությունները և եզրահանգումը.</u>

8. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *թիվ ԵԿԴ/0280/01/15 քրեական գործն ընդդատյա՞ է արդյոք Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:*

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:*

9.1 «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:*

Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի*

նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»[1]:

10. Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[2]:

Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ *«Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (19-րդ հոդված), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված):*

Ավելին, Եվրոպայի Խորհրդի Նախարարների Կոմիտեի «Դատավորների անկախության, արդյունավետության և պատասխանատվության մասին» թիվ (2010)12 Հանձնարարականում (հաստատվել է 2010թ. նոյեմբերի 17-ին) ևս ընդգծվում է, որ դատարանում գործերի բաշխումը պետք է կատարվի օբյեկտիվ, նախապես սահմանված չափանիշի հիման վրա՝ երաշխավորելու համար անկախ և անկողմնակալ դատավոր ունենալու իրավունքը: Այդ գործընթացի նկատմամբ

---

[1] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[2] Տե՛ս Եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

կողմերը կամ գործով շահագրգռված այլ անձինք ներգործություն ունենալ չեն կարող (տե՛ս նշված Հանձնարարականի 24-րդ կետը):

(…)

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախապատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (…)»[3]*:*

11. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի համաձայն՝ *«Ոչ ոքի չի կարելի զրկել իր գործն այն դատարանում և այն դատավորի կողմից քննելու իրավունքից, որոնց ընդդատությանն այն վերապահված է օրենքով»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 44-րդ հոդվածի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանները քննում են բոլոր քրեական գործերը, քրեադատավարական օրենսդրությամբ նախատեսված այլ գործեր (նյութեր), ինչպես նաև վերահսկողություն են իրականացնում քրեական գործի մինչդատական վարույթի նկատմամբ»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 47-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանին ընդդատյա են այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կատարվել են համապատասխան առաջին ատյանի դատարանի դատական տարածքում»:*

---

[3] Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Երկու կամ ավելի հանցագործությունների վերաբերյալ գործերն առաջին ատյանի տարբեր դատարաններին ընդդատյա լինելու դեպքում դրանք միացնելիս գործը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ավարտվել է տվյալ գործով մինչդատական վարույթը»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Դատարանը, պարզելով, որ ստացված գործն ընդդատյա չէ իրեն, այն ուղարկում է ըստ ընդդատության:*

2. Եթե սույն օրենսգրքի 44, 47 կամ 48 հոդվածով նախատեսված ընդդատության կարգի խախտումը հայտնաբերվում է դատական քննության ժամանակ, ապա կողմերի համաձայնությամբ դատարանն իրավասու է գործը թողնել իր վարույթում: Կողմերից մեկի առարկության դեպքում գործի կատարված դատական քննությունը չեղյալ է համարվում, և գործն ուղարկվում է ըստ ընդդատության»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածի համաձայն՝ *«Առաջին ատյանի դատարանների միջև ընդդատության մասին վեճերը լուծում է Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախագահը»:*

Վերոգրյալ իրավակարգավորումների համակարգային վերլուծությունից բխում է, որ քրեական գործերի ընդդատության ընդհանուր կանոնն այն է, որ առաջին ատյանի դատարանին ընդդատյա են այն հանցագործությունների վերաբերյալ գործերը, որոնք կատարվել են տվյալ առաջին ատյանի դատարանի դատական տարածքում: Միևնույն ժամանակ, օրենսդիրը սահմանել է այդ կանոնից բացառություն՝ ամրագրելով, որ առաջին ատյանի տարբեր դատարաններին ընդդատյա երկու կամ ավելի հանցագործությունների վերաբերյալ գործերը միացնելիս գործը քննում է այն դատարանը, որի դատական տարածքում ավարտվել է տվյալ գործով մինչդատական վարույթը:

12. Սույն գործերի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- ամբաստանյալներին մեղսագրված հանցանքները կատարվել են առաջին ատյանի տարբեր դատարանների դատական տարածքներում՝ Գեղարքունիքի, Արարատի, Կոտայքի և Արմավիրի մարզերում,

- ամբաստանյալներին վերագրվող արարքների վերաբերյալ հարուցված են եղել մի քանի քրեական գործեր, որոնք Նախաքննության մարմնի կողմից միացվել են մեկ վարույթում:

13. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 9-11-րդ կետերում վկայակոչված իրավադրույթների և արտահայտած դիրքորոշումների լույսի ներքո, պետք է փաստել, որ սույն գործով ամբաստանյալներին մեղսագրված են առաջին ատյանի տարբեր դատարանների դատական տարածքներում կատարված մի քանի հանցագործություններ, որոնցով հարուցված քրեական գործերը Նախաքննության մարմնի կողմից միացվել են մեկ վարույթում և սույն գործով մինչդատական վարույթն ավարտվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատական տարածքում:

Վերոգրյալի հաշվառմամբ և հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածում առկա իրավակարգավորումները, գտնում եմ, որ թիվ ԵԿԴ/0280/01/15 քրեական գործն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 51-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ ԵԿԴ/0280/01/15 քրեական գործն ըստ մեղադրանքի Տիգրան Դավիթի Հարությունյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (3 դրվագ) և 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով (3 դրվագ), Ռուստամ Մարտիկի Համբարձումյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով, 38-34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով (2 դրվագ), Էդվարդ Գևորգի Պողոսյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով,

Անդրանիկ Գևորգի Գրիգորյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով, Գագիկ Ջավենի Մխիթարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 38-34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով, Արմեն Նորիկի Սաֆարյանի՝ ՀՀ քրեական օրենսգրքի 34-266-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և 38-215-րդ հոդվածի 2-րդ մասով, ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ